մութիւնը բաժանենք 3 գլխաւոր շրջանների։ Այդ շրջաններից իւրաքանչիւրն իր ստորաբաժանումներն ու առանձին դրուագներն ունենալով հանդերձ, այնուամենայնիւ իրենից ներկայացնում է մի աւարտուած ամբողջութիւն։

Առաջին շրջանն սկսւում է Ռուբինեանց անկումից կամ աւելի ճիշդ ԺԶ. դարից եւ վերջանում է Դաւիթ Բէկով։ Շարժման նպատակն է՝ ազատագրել օտար լծից պարսկական Հայաստանը եւ հայկական անկախութիւնը վերականգնել։ Կատարւում են մի շարք դիմումներ ու փորձեր այդ ուղղութեամբ, որոնց իրական արդիւնքն ու լրացումը հանդիսանում է Դաւիթ Բէկի անկախութիւնը Սիւնեաց լեռներում (1722–28)։ Շրջանի ականաւոր քաղաքական գործիչներն են՝ Ստեփաննոս Սալմաստեցի, Միքայէլ Սեբաստացի, Յակովբ Ջուղայեցի կաթողիկոսները եւ Իսրայէլ Օրի ու Դաւիթ Բէկ, իրենց գլխաւոր աջակիցներով միասին։

Երկրորդ շրջանը սկսւում է Դաւիթ-Բէկեան անկախութեան բարձումից եւ փակւում է Երեւանի գրաւումով (1828), ռուսների ձեռքով։ Շարժման նպատակը կրկին նոյնն է — Պարսկական Հայաստանի ազատագրութիւնը եւ հայկական անկախութեան վերականգնումը։ Բայց ռուսները Հայաստանի մի խոշոր մասը պարսիկներից խլելով, հակառակ Հայոց սպասելիքների, կցում են իրենց երկրին եւ ռուսական մի նահանգ դարձնում։ Անկախութիւնը փոխարինւում է հպատակութեամբ։ Այս շրջանի նշանաւոր քաղաքական գործիչներն են՝ Յովսէփ արք. եպ. Արղութեան, Հնդկահայ Յովսէփ Էմին ու Յակովբ Շահամիրեան, Էջմիածնի կաթուղիկոսներից մի քանիսը, որոնց մէջ մասնաւորապէս Ներսէս Աշտարակեցի, կրկին իրենց գլխաւոր աջակիցներով միասին։

Երրորդ շրջանը սկսւում է Երեւանի առումից եւ վերջանում է Միացեալ եւ Անկախ Հայաստանի հանրապետութեամբ (1918)։ Շարժման նպատակն է՝ Տաճկահայաստանի ազատագրութիւնը։ Սակայն պատմութեան մի քմահաճ խաղով՝ Հայկական անկախութիւնն իրականանում է նախկին ռուսական Հայաստանում։ Շարժման գլխաւոր ղեկավարներն են հայ քաղաքական կուսակցութիւնները — Արմենական, Հնչակեան, Դաշնակցական — իրենց բազմաթիւ գործիչներով ու նահատակներով։

Դէմքերի ու դէպքերի այս մակերեսային յիշատակութիւնն անգամ ինքնին մէկ որոշ գաղափար է տալիս առ այն, թէ ո՛րքան հարուստ է հայ քաղաքական շարժումը իր ներքին բովանդակութեամբը — մի հսկայական շարան նշանաւոր գործիչների եւ աւելի հսկայական շարան ճիգերի ու ջանքերի։

Հայ ազատագրութեան շարժման մէջ շատ պատուաւոր տեղ ունին Ստեփաննոս Ե. Սալմաստեցի, Միքայէլ Սեբաստացի եւ Յակովբ Դ. Ջուղայեցի կաթուղիկոսները։ Սրա՛նք են, Ռուբինեանց անկումից յետոյ, Հայաստանի անկախութեան գաղափարի առաջին հրամիրները։ Իսկ այդ երրորդութեան թւում էլ ամենապատուաւոր տեղը պատկանում է Յակովբ Ջուղայեցուն. ամենապատուաւոր՝ ո՛չ թէ ժամանակագրական կարգով, այլ նրանով, որ Յակովբ Ջուղայեցին Հայաստանի անկախութեան գաղափարի առաջին նահատակը եղաւ։ Եւ մեր ներկայ սերունդը — խօսքը ի հարկէ աղճատուած հոգիների մասին չէ — որը այսօր իր կեանքի գերագոյն նպատակն է դարձրել Հայաստանի անկախութիւնը, պէ՛տք է որ անպայմանօրէն մօտիկից ճանաչի այն բոլոր դէմքերին, որոնք այդ գաղափարի նախակարապետները եղան մեր կեանքում։

Մեր այս յօդուածով մի շատ հաճելի, բայց եւ միեւնոյն ժամանակ ծանր պարտականութիւն ենք վերցնում մեզ վրայ — ուրուագծել Հայաստանի անկախութեան գաղափարի առաջին երեք հրամիրների կեանքն ու գործունէութիւնը եւ մեր ընթերցողներին ծանօթացնել նրանց հետ, աւելի մեծ տեղ տալով Ջուղայեցուն։ Ծանր ենք ասում այն պատճառով, որ նման մէկ աշխատանքի համար չափազանց աղքատիկ են մեզ հասած նիւթերն ու տեղեկութիւնները1)։

---

1) Որքան մեզ յայտնի է, 3 աղբիւրներ կան, որոնք յամենայն դէպս որոշ տեղեկութիւններ հաղորդում են մեզ — թէեւ շատ քիչ եւ կցկտուր — այդ երրորդութեան մասին՝ Առաքել Դաւրիժեցու պատմութիւնը, Զամչեանի Հայոց պատմութիւնը (Գ. հատոր), որի տեղեկութիւնները քաղուած են գլխաւորապէս